Համաքաղաքային քննարկումների ընթացքում արձանագրված մտքերը

Գործարար համագործակցության խնդիրները հայ-թուրքականան հարաբերությունների համատեքստում..... 2

Իրավական խնդիրները հայ-թուրքականան հարաբերությունների համատեքստում..... 10

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման խնդիրները..... 18

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Գործարար համագործակցության խնդիրները հայ-թուրքական հարաբերությունների համատեքստում

Համաքաղաքային քննարկումներ Երևանում

11.11.2010

Քննարկման ընթացքում արձանագրված մտքերը

- Ողջունում ենք համաքաղաքային քննարկման մասնակիցներին
- Սցենար առաջին
- Այս իրավիճակը բավարար համարել չի կարելի: Նույնիսկ առևտրային հարաբերությունների առկայությունը թույլ չի տալիս նման պնդում անել: Սահմանի փակ լինելու փաստը սահմանափակում է գործարար հարաբերությունների զանգացումը:
- Անհրաժեշտ է գտնել ընդհանուր եզրեր արբիտրաժային հարաբերություններում:
- Մեր առաջին քայլերը պիտի ուղղված լինեն ոչ թե սահմանի բացմանը, այլ իրավական դաշտի կարգավորմանը: Իրավական հարցերի լուծումը բնականորեն կվերաճի քաղաքական երկխոսության կայացման և սահմանի բացման:
- Հայ բիզնեսմենի և թուրքրի միջև հարաբերությունները բավական պատմություն ունեն, պետական հարթության վրա հարաբերություններ չկան, ամեն ինչ խարսխվում է միայն բիզնեսմենների անձնական շահերի վրա:
- Եթե միանան հայկական և թուրքական արիտրաժները, դիվանագիտական հարաբերությունների կարիք չի լինի:
- Այսօր ջանքերի վատնում է սահմանի բացման խնդիրը քննարկելը: Կոնկրետ քայլերի ձեռնակումն, օրինակ, գործարար դաշտում, ինքնըստինքյան կհանգեցնի դիվանագիտական մեխանիզմների մշակման:
- Հայատանի համար առաջին հարցը ոչ թե հողերի ետ վերադարձնելն է, այլ տնտեսական նոր հիմքերի ստեղծումը:
- Բիզնեսի տեսանկյունից բաց սահմանների պայմաններում հնարավորություններ ավելի շատ կլինեն:
- Շատ ռիսկային են այսօրվա իրավիչճկները, իրավակն դաշտ է պետք մտնել
- Ճիշտ կլինի բացել սահմանները, բայց հողերի հարցը լուծել ժամանակի ընթաքցքում:
- Որպես ֆիզիկական անձ՝ ես ինձ պաշտպանված չեմ զգում Թուրքիայում: Այնտեղ չունենք դեսպանատուն, հյուպատոսարան, ո՞վ է պաշտպանելու մեր իրավունքները:
- Թե՛հայը, թե՛ թուրքը, առաջին հերթին իր անձնական շահի մասին է մտածում ավելի շատ, քան քաղաքական որրևէ հարցի է անդրադառնում
- Պաշտպանվածության խնդիր ես չեմ տեսնում. այսօր կարող ենք դիմել միջազգային կառուցներին նման հարցերի դեպքում, օրինակ՝ Եվրոպական դատարան:
- Անհրաժեշտ է պետական մակարդակով ստեղծել մի խումբ, որ կկարգավորի բոլոր բիզնես հարաբերությունները:
- Այս վիճակը, կարծում եմ , ավելի ձեռնտու է Թուրքիայի քաղաքական շահերին, և նրանք չեն հետաքրքրված հարցի իրական քննարկմամբ ու լուծմամբ
- Թուրքիան՝ որպես տրանզիտ, հիմա աշխատում է, իսկ հե՞նց Թուրքիայից ապրանք պաշտոնապես չի գալիս: Փաստաթղթերը կա՛մ կեղծվում են, կա՛մ ձևակերպվում են այլ երկրի միջոցով:
- Պաշտպանված լինելու խնդիրը երկկողմանի է: Փոխադարձ թշնամական վերաբերմունքը թույլ չի տալիս նույնիսկ անցում կատարել իրավական դաշտ: Մենք սոցիալական դաշտում լուրջ խնդիրներ ունենք:

- Ներկայիս վիճակում բարձր են ծախսերը, իսկ առավել ևս ռիսկերը:
- Ստամբուլում ապրած աղջկա կարծիքով թուրքի հետ աշխատելը շատ ավելի վստահելի է, քան հայ-հայ հարաբերությունները
- Պետք է ստեղծել մի ֆինանսական ֆոնդ, որը կօգտագործի միայն այն դեպքում, երբ կողմերը պարտավորությունները չկատարեն: Անունն եկեք դնենք «տուգանքային ֆոնդ»:
- Թուրքիայի սահմանի բացումը մեզ համար շատ վտանգավոր է, քանի որ քրդերը կգան Հայաստան:
- Գործարար ոլորտը լուրջ խնդիրներ ունի իրավական դաշտում: Ոչ պաշտոնական տվյալներով Թուրքիան իր արտահանման ցուցանիշների մակարդակը ցույց է տալիս զրոյական: Սակայն իրականում գիտենք, որ գործարքներ կատարվում են: Իրականում՝ վրացական միջնորդավորվածությամբ:
- Իրավական հարաբերությունների բացակայությունը առաջին հերթին բարձրացնում է Հայաստան ներմուծման գինը:
- Հայաստան-Թուրքիա դիվանագիտական հարաբերությունների պայմաններում հնարավոր է ավելի դժվարանան մյուս պայմանները:
- Քաղաքական սրված պայմաններում Թուրքիայում ապրող հայերի վիճակը շատ է բարդանում
- Թե՛ Թուրքիան, թե՛ Հայաստանը չունեն քաղաքական կամք, որպեսզի սկսեն կարգավորել իրավական հարաբերությունները:
- Թուրքական սահմանի բացումն ավելի ձեռնտու է Թուրքիային, քան Հայաստանին:
- Թուրքիայի կառավարությունն ուղղակի թույլ չի տա, որ բիզնես կազմակերպությունների կոնսորտիում ստեղծվի
- Առաջին հերթին Հայաստանը շատ լավ շուկա է, իսկ մեր տնտեսությունը դրանից կտուժի:
- Գոյություն ունի տրանսպորտային տեղափոխման կոնվենցիա, որը Թուրքիան ստորագրել է, սակայն Հայաստանին այն վերաբերվում է որոշակի վերապահումներով: Հայկական օրենսդրությամբ մենք նման սահմանափակումներ չունենք: Ցանկացած թուրքահպատակ կարող է Հայաստանում իր գործունեությունը ծավալել:
- Նոր բիզնեսների համար ավելի դժվար կլինի, քան կայացածների համար, սակայն կայացածն էլ կորցնում է ավելի շատ:
- Մինչև դիվանագիտական ոլորտում գոնե մի փոքր առաջընթաց չլինի, ոչինչ չի լինի:
- Բիզնեսը չպետք է քաղաքական խնդիրների մեջ մտնի:
- Եթե համագործակցենք միայն տնտեսահրավական ոլորտում, ապա հնարավոր է ստեղծվի կախվածություն Թուրքիայից, ինչն էլ հետագայում կազդի քաղաքական ու դիվանագիտական հարաբերությունների վրա՝ ի վնաս մեզ:
- Բիզնեսի հարցում իրավական հարաբերություններն ավելի հեշտ է լուծել, քանի որ այստեղ շահի հարց կա, իսկ արդեն ազգային շեշտադրումների պարագայում շատ խնդիրներ կան
- Հայ գործարարների տեղեկացվածության մասին ընդհանրական տվյալներ չունենք: Գերակշռում են մասնակի դեպքերը, երբ գործարարների միջև կապերը հիմնված են միայն անձնական փորձի վրա:
- Մենք պետք է փնտրենք այլընտրանքային շուկաներ, այլ ոչ թե անօրինական հարաբերություններ ունենանք թուրքական բիզնեսի հետ:
- Որպես ՀՀ քաղաքացի Թուրքիայում որևէ խնդի չեմ ունեցել, կա երկկողմանի առևտրային շահ
- Մենք Թուրքիայից ներմուծում ենք գնային սանդղակով բավականին մատչելի ապրանքներ, և բավականին մեծ քանակությամբ:
- Թուրքը հային չի «քցում», իսկ հայը հային «քցումա»
- Ներկայում թուրքական ծագումով սնունդ չի մտնում Հայաստան, արգելված է:

- Վախի պայմաններում բիզնես չի զարգանա, իսկ փոխադարձ վստահությունն այսօր գրեթե զրո է: Ստատուս քվոն զարգացում կարող է ունենալ բացառապես անհատների համար, իսկ պետության մակարդակով, տնտեսական մակարդակով էական տեղաշարժ չի կարող լինել:
- Իրավական հարաբերությունների պարագայում կա հայ-թուրքական շահերի բախում:
- Մինչև օրս Թուրքիան բավականին լոյալ է վերաբերվում տրանզիտային գործարքներին: Սակայն եթե նա փոխի իր այս վերաբերմունքը, մենք ոչ մի լծակ չունենք նրան հարկադրելու շարունակել իր ներկա պրակտիկան: Թուրքիայի նման վերաբրեմունքը միանշանակորեն բացատրել հնարավոր չէ, թեև պետք է նշել, որ նա այս գործարքներից բնականաբար գումարներ է գանձում:
- Հայ-թուրքական իրավական և քաղաքական հարաբերությունները կախված են ոչ միայն ներքին, այլև քաղաքական արտաքին գործոններից:
- Բիզնես հարաբերությունները կարող են կարգավորվել և պաշտպանվել միայն հյուպատոսության միջոցով:
- Սահմանի բացումը հնարավորություն կտա շփվել թուրքերի հետ ու ներկայացնել իրական պատմությունը ցեղասպանության մասին:
- Եթե վաղը մյուսօր հայ-թուրքական հարաբերությունները լավանան, հնարավոր է այդ հարաբերութունները խթանեն նաև բիզնեսի զարգացմանը կամ լրիվ հակառակը:
- Մենք այստեղ գալուց առաջ պետք է ունենայինք որոշակի հետազոտության արդյունքներ ներկայիս իրավական վիճակի մասին:
- Երկրորդ սցենար
- Թուրքիան անպայման կօգտագործի իր քաղաքական լծակները բոլոր ոլորտների վրա:
- Էլի Վրաստան... պրծում չկա էլի վրացիներից:
- Երկրորդ սցենարի իմատը սխալ է, եթե երկու երկրները պատրաստակամ են այդ հարաբերություններին, ապա ամեն մեկն իր երկրում կանի, ինչու՞ միջանկյալ երկիր ընտրենք
- Էս տնտեսությամբ Հայաստանը հիմա չի կարողանում յոլա գնալ, ուր մնաց Արևմտյան Հայստանի հողերը ետ ստանալուց հետո:
- Անիմաստ ծախսեր են լինելու, եթե Վրաստանը որպես միջնորդ երկիր հանդիսանա բիզնեսների համար
- Երկրորդ սցենարում առաջարկված լուծումները իրականում «կիսալուծումներ» են. դրանք լիարժեք իրավական լուծումներ չեն առաջարկում:
- Վրաստանն իր նորմերը կդնի և քաոսային իրավիճակ կստեղծվի, պետք է Հայաստանի և Թուրիայի միջև ուղիղ կապ լնի, ո՛չ միջներդներին
- Երկրորդ սցենարը կապահովի որոշակի տնտեսական աճ համեմատած այսօրվա հետ, սակայն ձեռնտու չէ. նախ կախում վրացիներից, երկրորդ թանկ ապրանք:
- Երրորդ երկիրը պետք է ընտրել այնպես, որ դա լինի հզոր պետություն, օրինակ Ռուսաստանը:
- Իրականում երկրորդ սցենարը ոչնչով չի տարբերվում ստատուս քվոյից. հարկադրանք չկա:
- Ցանկացած պետություն, որ խառնվում է երկու երկրների հարաբերություններին, չի կարող չունենալ իր սեփական շահը
- Եթե երկու պետություններ ի վիճակի չեն բարիդրացիական հարաբերություններ հաստատել, ապա միջնորդի դերն արդեն անխուսափելի է դառնում: Այս դեպքում վրացական երրորդ օղակի ստեղծումն իրատեսական է:
- Եթե մենք աշխատող չենք, սահմանը բաց, թե փակ՝ միևնույնն է:
- Վրաստանն այնպիսի պետություն չէ, որ կարողանանք հույս դնել իր վրա,այնպիսի գործընկեր, միջնորդ է պետք, որ վստահելի լինի:

- Բիզնեսը այլ երկրում գրանցելու համար, հարկերը մուծվում են այդ երկրում, որը նաև երաշխիք է:
- Մեր խնդիրն այն է, որ պատրաստվենք սահմանների բացմանը:
- Հայ-թուրքական գործարար հանջձնաժողովը այս պահին լուծում է առկա բոլոր խնդիրները գործարարության ոլորտում:
- Ես ցավում եմ, որ մենք թուրքերին որպես թշնամի ենք ընդունում. նրանք էլ մարդ են:
- Իրականում սահմանը փակ չի, դա միայն վիրտուալ է, օդային սահմանն էլ է բաց, մարդիկ իրար հետ պայմանագրեր են կնքում....
- Նման լուծումը ժամանակավոր բնույթ է կրելու: Այսօր իրավական դաշտում միջազգային տենդնեցը հիմնված է տնտեսական շահերի բավարարման վրա, և այս դեպքում նման ժամանակավոր լուծումը կարող է հանգեցնել ավելի երկարաժամկետ լուծումների:
- Ես չեմ կարծում, որ հայ-թուրքական որևէ համատեղ բիզնես բացասական արձագանք կունենա:
- Էլի Վրաստանը մեր հաշվին կշահի, իսկ մեր իրավունքները չեն պաշտպանվի:
- Մեզ համար տնտեսական զարգացման շատ ուղիներ կբացվեն, ուղղակի պետք է ճիշտ քաղաքականություն վարել:
- Ապահովագրելու գործընթացները կարող են նաև հայ բիզնեսմենը իրենց ձեռքը վերցնել:
- Եթե Հայաստանը գայթակղիչ շուկա լիներ Թուրքիայի համար, սահմանը վաղուց բաց կլիներ:
- Այսօր ՀՀ-ում հիսունվեց կազմակերպություն կա գրանցված թուրքական կապիտալով:
- Եթե հարաբերությունները ճիշտ կարգավորվեն, ապա Վրաստանի միջնորդ դերը այնքան էլ կարևոր չի լինելու, միայն իրավական ձևակերպումներ պիտի այնտեղ կատարվեն
- Ով ում պիտի հարցնի, ով ում պիտի պատասխան տա: Ամենաթողություն կտիրի:
- Երկրորդ սցենարն իրատեսական չէ
- Մեր սեղանից երեք հոգի բացառապես չի գնում թուրքական ապրանք:
- Երկրորդ սցենարը հնարավոր է միայն մինչև սահմանների բացումը:
- Սահմանի խնդրի կարգավորման հարցում տնտեսական գործոնն առաջնային չէ Թուրքիայի համար:
- Ցանկացած միջնորդություն վտանգավոր տարր է կրում իր մեջ
- Պետք է աշխատել, որպեսզի ունենանք լոբբի, որ միջազգային հանրությանը ցույց տա, թե ինչպես է Թուքրիան խախտում առևտրային հարաբերությունները Հայաստանի հետ:
- Ճապոնիան էլ էր ժամանակին խնդիրների մեջ, հումքի պակաս կար, բայց այդ հարցերը լուծվեցին ու տնտեսությունը զարգացավ:
- Թուրքիայի հետ հարաբերությունները կարող են լուծվել մի երրորդ երկրի հետ համագործակցելով: Թուրքիային պետք չէ սահման բացել:
- Մեկ ա մեզ Վրաստանի միջոցով ձեռ չի տալիս թուրքերի հետ բիզնես անելը. ինչ ուզում է լինի, միայն վրացիներին օգուտ չլինի:
- Ծիծաղելի է: «Հայ-թուրքական հաաբերությունները» չի կարելի լուծել Վրաստանի միջնորդությամբ
- Օրական քսան-երեսուն թուրքական մեքենա է օգտվում Հայաստանի ճանապարհներից. մենք չենք կարող դա արգելել, քանի որ տնտեսական կախվածություն ունենք Թուրքիայից:
- Եթե խոսքը վերաբերվում է միջնորդ սպասարկող կազմակերպություններին, ապա նույնիսկ սահմանի բացման դեպքում նման կազմակերպության անհրաժեշտությունը չի վերանա: Այս հարաբերություններն այնքան խճճված են, որ նման միջոցներն անհրաժեշտ կլինեն բավականին երկար ժամանակ:

- Հայաստանը որպես այլընտրանքային տարբերակ պետք է ընտրի բացառապես Իրանին:
- Եթե միջնորդ պահելը թանկ է նստելու իմ վրա որպես գործարարի, ես բնականաբար նախընտրելու եմ այսօրվա զարտուղի ճանապարհները:
- Թուրքիա ԵՄ մաքսային միության անդամ է. հայ-թուրքական սահմանը ԵՄ-Հայաստան սահմանն է, ըստ էության: Արդյո՞ք Հայաստանը երբևէ դիմել է ԵՄ-ին այս հարցով:
- Ներկա իրավիճակը՝ հեռախոսազանգով հարցեր լուծել, ձեռնտու է գործարարին: Ինչո՞ւ բարդացնել կյանքը:
- Եթե իրավական դաշտին որևէ լուծում չտրվի, բիզնեսի զարգացումը նորից շարունակելու է ռիսկային մնալ:
- Ես թուրքերին չեմ հավատում ու վե՛րջ:
- Ո՞րն է թանկ. Թուրքիա-Վրաստան-Հայաստան, թե՞ Թուրքիա-Հայաստան:
- Երրորդ սցենար:
- Երրորդ սցենարն այնքանով է լավ, որ շատ կողմ չի խառնվում. ինչքան շատ կողմ, էնքան բարդություն:
- Պարզ հաշվարկ է պետք. ո՞րն է ավելի արդյունավետ Հայաստանի համար:
- Երրորդ սցենարն ընդունելի չէ, քանի որ կախում է ստեղծում Թուրքիայից:
- Այսօր ընդունված է, որ տնտեսությունն է թելադրում քաղաքականությանը:
- Միջազգային իրավական շրջանակներում կարել է Հայաստանի համար հարմար պայմաններ ստեղծել
- Պետք է անյպիսի համաձայնագրր կնքել, որ շահավետ լինեն մեզ համար
- Այսօր թուրքերը չեն գիտակցում իրենց շահը հայերի հետ բիզնեսում:
- Թուրքիան պետք է շահ ունենա, որ այս սցենարը իրականանա: Հայաստանը բան չունի առաջարկելու, դրա համար էլ քաղաքական դաշտ է պետք է մտնել:
- Հայ-թուրքական հարաբերությունները սպեցիֆիկ են. դրանք մեկընդմիշտ պայմանավորված են երրերդ երկրով:
- Տնտեսական շահերից ելնելով մեզ համար շահավետ է սահմանների բացումը, բայց հողերի ետ բերումը դեռ շատ հեռու է:
- Ես ծնվել եմ Հայաստանում ու ապրելու եմ այստեղ, ինչ էլ որ լինի:
- Մինչև գլոբալ հարցերը Հայաստանի և թուրքիայի միջև չլուծվեն, նմանատիպ սցենարն ու միկրոհարցերն անիրատեսական են:
- Երրորդ սցենարը գայթակղիչ է, բայց պիտի զգույշ լինել: Պիտի դիվանագիտական հմտություն ցուցաբերել:
- Մեր օգուտն էլ Թուրքիայից այդքան մեծ չի, ինչքան «երազում ենք»: Ժամանակին ԱԵՓԼԱՔ-ի հետազոտությունները դա ցույց են տվել:
- Սահմանների բացումից ամենաշատը կօգտվեն մի քանի օլիգարխներ:
- Երրորդ սցենարը միջնորդների դերը կնվազեցնի, իսկ դա լավ հիմք է փոխադարձ վստահության ձևավորման և հասարակությունների մերձեցման համար:
- Եթե երկու հարևան չեն կարողանում յոլա գնալ իրար հետ, ո՞նց են դուրս գալու միջազգային դաշտ: Իսկ սա այն է, ինչ ուզում ենք թե՛ մենք, թե՛ Թուրքիան:
- Անգամ սահմանների բացման դեպքում Վրաստանի միջնորդությունը չպետք է կորցնենք:
- Սահմանային հարցերը կասեցվել են հայ-ադրբեջանական հարաբերությունների պատճառով: Այս իրավիճակը չի խորանա, բայց նաև չի էլ բավարարվի:
- Այս սցենարի վտանգը. նման միջանկյալ լուծման արդյունքում կարող ենք կորցնել մեր քաղաքական պահանջատիրությունը:

- Ո՞վ է ասել, որ եթե մենք էլեկտրաէներգիա արտահանենք, դա լինելու է հուր-հավիտյան: Մի օր էլ Թուրքիան կասի. «Չեմ ուզում»: Հետո՞:
- Մենք փոքր բիզնեսով տնտեսություն չենք կարող զարգացնել: Դրա համար խոշոր ենթակառուցվածքները պիտի խթանենք, իսկ դա առանց պետական աջակցության ու միջամտության հնարավոր չէ:
- Ինչպես մենք ենք գիտակցում, այնպես էլ թուրքերն են գիտակցում մեր ընդհանուր շահերը, ինչու՞ պետք է դեմ լինեն, որ ամեն ինչ լավ լինի:
- Ինչ-որ բան անելու համար պիտի պատրաստել մեր հասարակություններին: Այսօր ավելի պատրաստ ենք, քան մեր նախորդ սերունդը, բայց դեռ ահռելի աշխատանք կա անելու:
- Ի՞նչ ունենք. երեք միլիոնանոց շուկա, մոնոպոլ ներմուծման շուկա, կոռումպացված կառավարման համակարգ: Դուք՝ որպես բիզնեսմեն, ներդրում կանե՞ք Հայաստանում: Ես չէի անի: Թուրքն ինչու՞ պետք է անի:
- Անհատները չեն կարողանում իրենց շահերը պաշտպանել Թուրքիայում, միայն տուրիստական կազմակերպություններն են դա իրականացնում: Իսկ Ստամբուլում դա չի գործում:
- Այսօր կարծես Հայաստանն ավելի պատրաստ է Թուրքիայի հետ տնտեսական հարաբերություններ հաստատել, քան Թուրքիան:
- Միայն բիզնեսի տեսանկյունից երրորդ սցենարը ձեռնտու է մեզ:
- Եկեք չանտեսենք Սփյուռքին: Արդյո՞ք նման գործընթացների արդյունքում չենք կորցնելու Սփյուռքին:
- Երեք տարի է Հայաստան թուրքական սնունդ չի մտնում, բայց մենք ապրում ենք: Իսկ մենք նրանց կարիքն ունե՞նք:
- Երրորդ սցենարը «մի քիչ» ուտոպիստական է
- Որտեղ հայը կա, էնտեղ նորմալ բան չի կարող լինել
- Երրորդ սցենարը միգուցե լավ է, սակայն իրատեսական չէ:
- Չորրորդ սցենար
- 131 կետի մտքի հետ ՀԱՄԱՄԻՏ ՉԵՄ
- Չորրորդ սցենարը լավ է. միգուցե բաց սահմանների համը երկու կողմին էլ դուր գա և որոշեն, որ էդպես բաց էլ պահեն:
- Չորրորդ սցենարը նոր ֆուտբոլային դիվանագիտություն է:
- Ոչ մի իրավական, տնտեսական հանգուցալուծման չենք կարող գալ, մինչև չլուծենք Թուրքիայի հետ գլոբալ խնդիրները:
- Կոնֆլիկտների դեպքում տեսանք ինչ եղավ: Հիշենք Վերին Լարսը Ռուսաստան-Վրաստան սահմանին, որը փակվեց ռուս-վրացական պատերազմի ժամանակ: Հայաստանում խուճապ սկսվեց: Սա թույլ տալ չի կարելի:
- Չորրորդ սցենարի դեպքում մենք կարող ենք մեր Սփյուռքին կորցնել:
- Բիզնեսի օրենքներից. բիզնեսը ազգություն չի ճանաչում: Բայց մեր համար կա մի գործոն, ավելի ճիշտ մարդիկ, ովքեր իրենց շահը ստորադասում են ազգայինին:
- Միջազգային հանրությունը պետք է հարաբերությունների երաշխավոր կանգնի
- Եթե Վրաստանի տարիֆները ցածր լինեին, սահմանի բացման կարիք չէր լինի
- Չխոսեցինք հայ-իրանական հարաբերությունների մասին: Արդյո՞ք հայ-թուրքական հարաբերությունների բարելավումը չի տանի հայ-իրանական հարաբերությունների վատթարացմանը:
- Այսօր միջազգային հանրությունը մեզ «կուտ» է տալիս, իսկ իրենց երաշխավորի դերը ավելի շատ վտանգավոր է

- Ինչպես գործարարն է քաղաքակիրթ ձևով բիզնես վարում, այնպես էլ քաղաքական գործիչը պետք է քաղաքակիրթ ձևով բարձրացնի հողերի հարցը...
- Ես չեմ ուզում սահմանը բացվի, որովհետև լավ գիտեմ մեզ ու գիտեմ, թե ինչ կլինի դրանից հետո:
- Գլոբալ տեսանկյունից ոչ մեկ էլ չի ցանկանա, որ այս սցենարով իրավիճակը զարգանա
- Մինչև չորրորդ սցենարի իրականացումն անհրաժեշտ է որոշ նախապատրաստական աշխատանքներ կատարել. օրինակ, օրենսդրական դաշտի բարեփոխում և համապատասխանեցում միջազգային ստանդարտներին:
- Եթե ՀՀ-ն առաջանա եվրոինտեգրման հարցում, ապա համատեղ գործունեության միջավայր ինքնաբերաբար կստեղծվի:
- Թուրքիայի տնտեսական շահը Հայաստանի հետ սահմանը բացելու դեպքում պայմանավորված է դեպի Ռուսաստան ելքով, քանի որ Հայաստանը ԱՊՀ անդամ է:
- Հայերը պետք է հասկանան, որ միայն Վրաստանով ու Թուրքիայով չեն սահմանափակվում այն երկրները, որոնցով պետք է մեզ կապել արտաքին աշխարհի հետ:
- Ես կարևորում եմ մեր բիզնես հարաբերությունների զարգացումը, հատկապես հաշվի առնելով մեր որակյալ արտադրանքը:
- Մենք ունակ չենք բիզնես հարաբերությունները քաղաքականից տարանջատել: Նույնն էլ Թուրքիայում է:
- Ես ոչ մի պետության մտրակի տակ ապրել չեմ ուզում:
- Եթե սահմանը բացվի, մարդիկ կոնկրետ տնտեսական շահ կունենան և դժվար թե կողմ լինեն, որ բացված սահմանը փակվի
- Մենք պիտի մեզ սիրենք, զբաղվենք մեզանով, զարգանանք ու նոր մտածենք մյուս հարցերի մասին:
- Թուրքիայի բարի կամքն էլ գիտենք: 1915-ին էլ նման մի բարի կամքի թեթև սուր զգացինք:
- Հայաստանը իր բոլոր ռեսուրսները տվել է ուրշներին, որնցից մենք կախված ենք: Անգամ Մադագասկարից՝ կակաոն գալիս է այնտեղից:
- Սահմանի բացումը կարող է երկսայր սուր լինել Հայաստանի համար. պատկերացրեք, եթե բաց սահմանների դեպքում ավելանա Թուրքիայից Հայաստան ապրանքների ներմուծումը, սակայն Թուրքիան շարունակի արգելել Հայաստանից Թուրքիա ապրանքների արտահանումը:
- Եթե գոնե գրված օրենքները գործեին, կարելի էր մտածել, բաղց մեր երկրում օրենք չկա, ինչի՞ մասին ենք մտածում:
- Հայաստանը փոքր շուկա ունի, իսկ սահամնի բաց լինելու պարագայում հնարավորությունները կավելանան
- Չորրորդ սցենարը հավանական չէ, քանի որ կրկին Ադրբեջանի գործոնն անտեսել չի լինի: Իսկ այդ գործոնը խորչընդոտում է ցանկացած մերձեցման գործընթաց:
- Մեդիտացիա անենք. ենթադրենք սահմանը բաց է: Ինձ՝ սովորական մահկանացուիս, ոչինչ էլ չի լինելու: Որոշ մարդկանց բյուջեն հաստատ չի նվազելու, այլ ընդհակառակը: Պեսոկ բերողը պեսոկ ա բերելու, պողոսը պետրոս ա բերեու...
- Եթե սահմանը կարճաժամկետ բացվի ու փակվի, ապա գլոբալ փոփոխություններ չեն լինի
- Օքյուլ դեֆթերիի մասին ոչ մեկ բան չի ասում...
- Թուրքիան մեր հարևանն է, շատ կարևոր է նրանց հետ հարաբերություններ ունենալ, բայց քաղաքական հարցը պարադոքս է: Սահմանը բացվելու է, երբ մենք պապի դառնանք արդեն:
- Եթե սահմանը բացվեց, ապա փակելը շատ դժվար կլինի
- Թուրքիան բաց սահմանի դեպքում դիմելու է դեմպինգի ու մեր շուկան կսուզվի:

- Հայ-թուրքական հարաբերությունները մեծ տերություններով է պայմանավորված, օրինակ՝ Ռուսաստանը, ԱՄՆ: Մի նոր գաղափար է պետք այս հարցերում:
- Թուրքիան այսօր G20-ի անդամ է, ու զարգանում է անընդհատ: Եթե սահմանը բացվելու լինի, կբացվի:
- Թուրքիան սահմանը բացելուց առաջ նախ պիտի ծանր ու թեթև անի, թե արդյոք քրդերը գլուխ չեն բարձրացնի՝համագործակցելով հայերի հետ. չէ՞ որ, «իմ թշնամու թշնամին իմ բարեկամն է»:
- Հիմնավոր պատճառ է պետք սահմանը փակելու համար
- Կամ Թուրքիայի հետ հարաբերությունները կլավանան կամ էլ պատերազմ կլինի մի օր, իսկ դա ցանկալի չէ
- Թուրքերը հայ-թուրքական հարաբերություններում ոչ թե տնտեսական, այլ դեմոգրաֆիական շահ են հետապնդում:
- Որևէ մեկդ մտածել է, թե ինչու՞ է ինտերնետն ավելի թանկ, քան լույսը:
- Գործարար հարաբերությունների բարելավման գործընթացը կարող է զարգանալ մինչև որոշակի կետ միայն. այդ պահից հետո քաղաքական և սոցիալական գործոնները կսկսեն ճնշել գործարարների գործունեությունը:
- Մի բան պարզ է. կամ լավ կլինի կամ էլ վատ: Կարևոր չէ, թե որ սցենարը կլինի:
- Մենք պետք է պատրաստ լինենք Թուրքիայի ԼՈՒՐՋ ազդեցությանը, բավականին լուրջ:

Իրավական խնդիրները հայ-թուրքականան հարաբերությունների համատեքստում

Համաքաղաքային քննարկումներ Գյումրիում

23.11.2010

Քննարկման ընթացքում արձանագրված մտքերը

- Բարի օր Գյումրի
- Ողջունում ենք համաքաղաքային քննարկման մասնակիցներին
- Մեր հայրենակիցներից շատերը տասնյակ տարիներ իրենց բիզնեսն են իրականացնում Թուրքիայում, օգնում հարազատներին ապրելու: Ինչու՞ այն չդնել իրավական դաշտի մեջ:
- Այսօրվա վիճակը պետք է փոխվի: Այս վիճակը բավարար չէ: Հարևանի հետ միշտ պետք է բարիդրացիական հարաբերություններ ունենալ:
- Սահմանի բացումը մի կողմից լավ է, բայց մյուս կողմից շատ վտանգավոր է:
- Արդեն իսկ առկա գործարար հարաբերությունները կարող են միայն պահպանվել, սակայն իրական զարգացման համար նպաստավոր պայմաններ չկան:
- Այսօր մեր հարաբերությունները շատ սահմանափակ են, և ամեն ինչ կատարվում է ռուսների միջամտությամբ:
- Պետք է շփվել , բայց միշտ զգոն լինել:
- Առկա հայ-թուրքական համագործակցության ծավալը բավարար է, ուղղակի թանկ է:
- Մինչ սահմանի բացումը պետք է նախապայմանները քննարկել:
- Էժան ապրանքից կարող ենք օգտվել, որակյալից՝ ոչ: Թուրքիան էժան ապրանքների աղբյուր է:
- Միջազգային դատարանները տվյալ պահին լուծում են առկա բոլոր խնդիրները բիզնեսի բնագավառում:
- Առաջինը վտանգ է սպասվում Գյոմրիին. թուրքերը բնակարաններ կգնեն Գյումրիում և մեր քաղաքն էլ կընկնի Երևանի օրը, ուր ներխուժել են պարսիկները :
- Այսօր Թուքիայում կա և անհատի, և բիզնեսի համար վախի գործոնը: Մենք այսօր օգտագործում ենք նրանց սննունդը, հագուստը, տրադիցիաները, պարը և այլն: Պետք է սկսել բանակցային գործընթացները:
- Ամեն ինչ փոքրից է սկսվում, պետք է տուրքերի մշակույթն ու բարքերն իմանալ, տիրապետել այդ ամբողջ տեղեկատվությունը, որ իրենց հասկանանք
- Սեփական գումարով, սեփական ռիսկով գործարարը գնում է Թուրքիա: Կողոպուտ, թալան, ի՞նչ է անելու այդ դեպքում:
- Սահմանի բացումը ունի նաև դրական կողմ. ապրանքափոխանակությունը կզարգանա, տորիզմը և այլն:
- Կապ չունի Հայաստանն ու Թուրքիան ունեն իրավահարաբերություններ, թե ոչ, ամեն դեպքում միջազգային դատարանի վճիռը հիմնավոր է:
- Իրավական հարաբերությունները կսկսվեն երբ բանակցությունները երկու պետությունների միջև վերահաստատվեն:
- Կարծում եմ, որ այս պայմաններում դեռ երկար կարող ենք յոլա գնալ, ոնց որ ապրում ենք, այպես էլ կշարունակենք ապրել:
- Քաղաքականությունն ու բիզնեսը միմյանց վրա են ազդում այս հարցում: Բիզնեսի տեսանկյունից պետք է բաց սահման ու ազատ առևտուր, բայց մյուս կողմից ունենք Ղարաբաղի ու Ցեղասպանության հարցեր:
- Բիզնեսի զարգացում նկատվում է, եթե քաղաքական հարաբերություններն էլ լավանան իրավիճակն ավելի կլավանա:
- Երկրաշարժից անմիջապես հետո Գյումրիի ամբողջ հարստությունը գնաց Թուրքիա: Նորմալ հարաբերությունների դեպքում ամեն ինչ այլ կլիներ:

- Գաղտնիք չէ, որ հայ ձեռներեցները ունեն գործարար հարաբերություններ: Ուստի անհրաժեշտ է ստեղծել մի կառույց, պետական կամ ոչ պետական, որը կկարգավորի հարաբերությունները:
- Քանի որ Ղարաբաղի հարց ունենք, Թուրքիա նախապայման է դնում մինչև որևէ գործողություն նախաձեռնելուց առաջ: Մեր ու Թուրքիայի շահերը հակաբևեռ են:
- Հայը շատ լավ հարաբերություն է հաստատել թուրքի հետ, հետևաբար նրանք առանց խնդրի ուղարկում են մեծ բեռնատարներ, բեռնված ապրանքով, որի վճարումները կատարում են վաճառքից հետո:
- Շիրակի մարզը սոցիալապես ամենախոցելի մարզն է, դրա համար էլ մեծ մասն այստեղից գնում է: Սահմանների բացման դեպքում գնալն ավելի հեշտանալու է:
- Ցանկացած այլ հարց, բիզնեսին չառնչվող, վտանգում է հայ-թուրքական գործարար հարաբերությունները:
- Թուրքիայի սահմանի բացումը կբերի մրցակցության ավելացմանը Հայաստանում, մասնավորապես տուրիզմի բնագավառում: Ստիպված մեր տուրիզմը կէժանանա ու կբարելավվի:
- Մինչև ե՞րբ պետք է այս վիճակում ապրենք, հարևաններն ենք, մինչև ե՞րբ գործիք դառնանք մեծ պետությունների ձեռքին
- Սահմանների բացումը միջոց է, բայց արդյո՞ք դա լավագույն միջոցն է. ինչո՞ւ զարկ չտալ ներքին տնտեսությանը:
- Թուրքիան հակված է փակ սահմաններին, շրջափակված Հայաստանին: Նման իրավիճակը պառակտում է Հայաստանը:
- Ախուրյանի ջրամբարի օգտագործման հարցը, բիզնես չի կարելի համարել, այն ԽՍՀՄ ժամանակ է ստորագրվել և հիմա միայն պետությունների միջև պետք է կնքվեն համաձայնագրեր:
- Առաջին. դիվանագիտական հարաբերություններ: Դա է անհրաժեշտ:
- Հայաստանը պատրաստ է պայմնագրի ստորագրման համար, իսկ թուրքը՝ ոչ:
- Մեզ համար դժվար է, մենք շրջափակման մեջ ենք, իսկ թուրքերի համար ուրիշ է, իրենց ճանապարհները բաց են
- Միակ պլյուսը առևտրական կապերի զարգացումն է :
- Թուրքիան միանշանակ կարող է բացել դեսպանատուն ՀՀ-ում: Բայց պատկերացնու՞մ եք այդ շենքը ապրիլի 24-ին...
- Բացելով սահմանները մենք կարող ենք ձուլվել թուրքերի հետ:
- Քաղաքական նուրբ հարցերին, պետք է նուրբ վերաբերվել:
- Եթե պարսիկի հետ ամուսնանում են, թուրքի հետ կամուսնանան: Դա շատ վտանգավոր է:
- Աշխարհասփյուռ հայերը ունեն իրավունք լինեն ՀՀ քաղաքացի, բայց այդ իրավունքից օգտվելը վտանգում է Թուրքիայում բնակվող մեր հայրենակիցների կյանքը:
- Մենք, Ադրբեջանն ու Թուրքիան շատ բաների անդամ եք, հետո՞: Երկու կողմից էլ կոնվենցիաներ ունենք ստորագրած, բայց վերջերս սահմաններն անընդհատ խախտվում են: Ո՞վ է ինչ պատիժ կրել մինչև հիմա: Ցանկացած կողմի խախտման դեպքում ոչ ոք չի արձագանքում, ուրեմն դրանց վրա հիմնվել չենք կարող:
- Մինչ Գյումրի-Կարս ճանապարհի փակումն իրավիճակն այլ էր Գյումրիում, 40 րոպե հետո Թուքիայում էինք, կարճ ճանապարհով
- Ես էդքան ամուսնությունից չեմ վախենում, ինչքան չամուսնանալուց. գնան, ֆռֆռան, երեխեքն ունենան ու հետ գան:
- Հեռանկար չկա... ոչ մի հարաբերություն չի կարող լինել երկու պետությունների միջև:
- Այս իրավիճակը կշարունակվի այնքան, քանի դեռ երկու երկրները առաջ են գնում նախապայմաններով:
- Սահմանի բացումը ձեռնտու է միայն առևտրականների և այն մարդկանց համար, ովքեր նախագահի կողքին են:
- Մարդիկ մեծամասամբ գերադասում են հանգստանալ ծովի մոտ, քան լճի: Բացի դրանից Սևանի բնակլիմայական պայմանները հարմար չեն հանգստանալու համար:

Բայց դա չափանիշ չէ: Մենք ունենք տուրիզմ զարգացնելու մեծ պոտենցիալ՝ այսօր էլ շատ արտասահմանցիներ գալիս են հին Գյումրին տեսնելու:

- Մինչև Ղարաբաղի հարցը չլուծվի, Թուրքիան ո՛չ մի դրական քայլ չի անի:
- Եթե սահմանների բացումը պիտի լինի ինչ-որ բաների հաշվին, օրինակ Ղարաբաղը զիջելու, ուրեմն թող մնա այնպես, ինչպես հիմա:
- Պետք է նախապայմաններին չհամաձայնենք, պետք է մտածել մի ուրիշ ճանապարհ:
- Կողմերին փոխադարձ հանդուրժողականություն է պետք: Հայաստանում կարծես պատրաստ ենք նման վերաբերմունքի, սակայն Թուրքիայում մերժողական տրամադրությունները արգելակում են մերձեցման գործընթացը:
- Մինչև ղարաբաղյան պատերազմը Թուրքիայի հետ չկային դիվանագիտական հարաբերություններ, բայց կար որոշակի համագործակցություն: Իսկ հիմա այն լինել չի կարող:
- Թուրք հասարակության այն մասը, որը ադրբեջանական ծագում ունի, պատրաստ չեն և չեն ուզենա հարաբերություններ Հայաստանի հետ:
- Անկախ քաղաքականությունից՝ բիզնեսն աշխատում է, այսօր բոլորիս հագին թուրքական հագուստ է, ահա ձեզ ապացույց...
- Թուրք ղեկավարների շնորհիվ է առաջացել կոնֆլիկտը, այլապես ժողովուրդները կարող էին և ապրել համատեղ:
- Հոլոքոստից հետո հրեան ու գերմանացին շատ ջերմ հարաբերություններ ունեն: Մենք էլ կունենանք, եթե Թուրքիան ընդունի Ցեղասպանության փաստը:
- Մենք ավելի շահագրգռված ենք Թուրքիայի հետ սահմանը բացելու հարցում և ոչ թե իրենք, դրա համար էլ նրանք են պայմաններ թելադրում:
- Թուրք հասարակությունը մեր պես չի մտածում, նրանք քաղաքական հարցերը թողնում ենք քաղաքագետներին և նրանք լավ դիվանագետ են:
- Հայերի պրոբլեմը այն է, որ տրադիցիաներ չենք պահպանում. օրինակ, պապը գինեգործ է, բայց թոռը ուրիշ փնտրտուքների մեջ է: Արդյունքում ոչ գինեգործն է գինեգործ, ոչ այգեպանը և այլն:
- եթե հայ-թուրքական սահմանը բացվի, հստակ փոփոխություններ կլինեն բիզնես ոլորտում
- Եթե այսպես մնա, մի քանի տարի հետո մենք կարող ենք հայտնվել փակուղու մեջ:
- Ժամանակը կարող է գալ, որ Վրաստանի հետ մեր հարաբերությունները վատանան:
- Սահմանների հարցը կլուծվի, եթե թուրք ու քուրդ ժողովուրդներն իրենց կառավարությունից մասսայաբար պահանջեն այն:
- Այս ամենը ինչ որ իրականացվում է առևտրի մեջ, դա սև շուկա է: Ո՞վ գարանտը այս հարցերում:
- Մենք շրջապատված ենք մուսուլմանական երկրներով, ուզենք թե չուզենք պիտի ինչ-որ ուղի գտնենք:
- Ինչո՞ւ խոսենք հայ-թուրքական սահմանի մասին, եթե մեր բաց սահմանները չենք կարողանում օգտագործել: Մոնոպոլիստական տնտեսության դեպքում բաց սահմաններն էլ արդյունավետ չենք կարողանում օգտագործել:
- Հայաստանում մեծ մասը կողմ են սահմանի բացմանը, հետևաբար ժողովրդական ճնշում պետք է գործադրվի միայն Թուրքիայում:
- Շատ ժամանակ խնդիրը հենց մեր՝ հայերիս մեջ է, մենք իրար հետ լեզու չենք կարողանում գտնել:
- Մենք գործարան չունենք, մեր գործարանները հին են ու չեն կարող աշխատել: Որ սահմանը բացվի, մեր ի՞նչը պիտի փոխվի:
- եթե մի բան մենակ վստահության վրա է, մենակ թղթով չէ, պատկերացնում ե՞ք 0-ից բիզնես սկսողի համար որքան դժվար է
- Հայ քաղաքացին իր ապահովությունը պաշտպանել է իր թուրք ընկերոջ միջոցով:
- Եկեք լուծենք մեր ներքին խնդիրները, հետո խոսենք հայ-թուրքական սահմանների մասին:
- Մեր պատմությունը ցույց է տալիս, որ չի կարելի ամեն ինչ միանգամից ուզել: Եկեք սահմանը բացենք, տեսնենք ինչ է լինում ու կամաց-կամաց առաջ շարժվենք:
- Բիզնեսը ռիսկեր է պահանջում, եթե օրենքը չի գործում, ապա շատ իրավունքներ չեն գործի

- Ավելի լավ է մեր երկու պետությունների միջև իրավական դաշտ ստեղծեն, ոչ թե մի երրորդի միջոցով, որը ավելի թանկ է ստացվում:
- Նույնիսկ Հայաստանում մարդ իրավականորեն պաշտպանված չի, էլ ի՞նչ եք ուզում Թուրքիայում պաշտպանված լինի:
- Մենք դեռ Ավարայրի ճակատամարտում էինք համոզվել, որ վրացիները մեզ օգնող չեն. նրանց վրա հույս դնել չի կրելի:
- Մենք դեռ Ավարայրի ճակատամարտում էինք համոզվել, որ վրաիները մեզ օգնող չեն. նրանց վրա հույս դնել չի կարելի:
- Փաստ է արդյո՞ք, որ բաց սահմանը կերաշխավորի էժան ապրանքների ներհոսք: Կա՞ն հավաստի ուսումնասիրություններ:
- Միևնույն է ամեն ինչ դրսից ենք բերում, եկեք սահմանը բացենք, որ ամեն ինչ ավելի էժանանա:
- Եթե բացվի՝ լավ, եթե չէ՝ ապրում ենք էլի.....
- Եթե մեկը չի ուզում ինձ հետ ընկերություն անել, ես ի՞նչ կարող եմ անել:
- Սցենար երկրորդ՝ ավելի լավ է երկու ճանապահ ունենաս, քան մեկ
- Եթե վրացիներն էլ հրաժարվեն մեզանից, ապա մենք կհայտնվենք փակուղուն. միակ հույսը Ռուսաստանն է:
- Եթե Պարսկաստանի վրա էմբարգո դնի ԱՄՆ-ն, ապա ստիպված ենք հարաբերություններն ունենալ Թուրքիայի հետ:
- Եթե հրաժաշվենք մեր պահանջներից կդառնանք Թուրքիա Էրմենիստան նահանգ:
- Պարսկաստանը ևս կարող է լինել մեր գործընկերը. նրանց ուղղությամբ կարելի է մտածել:
- Մենք ներսից պիտի կայուն ու ամուր լինենք: Ազգային ինքնագիտակցության մասին պիտի մտածենք:
- Մենք չպետք է վատացնենք Թուրքիայի հետ մեր հարաբերությունները, մենք շատ շահավետ ենք նրանց համար: Անգամ մենք իրենց համար տրանզիտ երկիր կարող ենք հանդիսանալ:
- Երկրորդն անհավանական է, միանգամից ասեմ: Ինչքան մենք ուզում ենք, որ ճանաչվի Ցեղասպանությունը, էայնքան էլ Թուրքիան ձգտում է մտնել ԵՄ:
- Մենք միայնակ ոչինչ չենք կարողանում անել, մեր տնտեսությունը թույլ է, պետք է ճանապարհներ գտնել:
- Այսօր Հայաստանում մեծ քանակությամբ մեղր է արտադրվում, որը Ծառուկյանն արտահանում է արտասահման: Ես չեմ օգտվում դրանից: Հիմա բաց սահմանն ինձ ինչո՞վ է օգնելու:
- Թուրքիան ռիսկի չի գնա, որ լարվածություն ստեղծի տարածաշրջանում:
- Ասում ենք սահմանի բացել-փակելը Թուրքիայի ձեռքն է, ո՛չ մենք Թուրքիայի դեմ զենք ունենք, բա մեր հողե՞րը, ամբողջ աշխարհը Թուրքիային ոտնահարում է այդ հարցի շուրջ:
- Քանի մենք կանք, Թուքիայի շանսը Եվրամիություն մտնելու համար կա, դրա համար նա մեզ հետ պետք է լավ հարաբերություններ ունենա:
- Մենք Թուրքիայի հետ շփվում ենք սահմանային գոտում. մենք՝ մեր շահով, նրանք՝ իրենց:
- Եթե ուրիշ ելք չկա, ապա Իրանի հետ պետք է լավացնել մեր հարաբերությունները:
- 2-րդ սցենարի դեպքում մենք կհայտնվենք ավելի խղճուկ վիճակում:
- Սահմանի բացում նշանակում է ժողովրդավարական իրավիճակի փոփոխություն: Հատկապես մեր մարզը շատ հարմար է քրդերի համար անասնապահությամբ զբաղվելու համար: Պատրա՞ստ ենք դրան:
- Պետք է բոլորի հետ էլ լավ հարաբերություններ պահպանենք, անգամ Իրանի հետ շատ լավ հարաբերություններ կան, աղջիկներն են ամուսնանում և նման շատ բաներ:
- Կան պարտավորություններ, որոնք ՊԱՐՏԱԴԻՐ են. պատերազմի ժամանակ էլ Թուրքիայից որոշակի քանակությամբ սննդամթերք մտնում էր Հայաստան:
- Ռուսաստանը Հայաստանում իր շահն ունի, թե չէ մեր սիրուն աչքերի համար չի օգնի երբեք:

- Վրաստանի վրա հույս դնել չի կարելի: Նրանք միշտ մեզ դավաճանել են: Վերջին ապացույցը մանկական Եվրատեսիլն է:
- Թուրքիայի հետ բաց սահման նշանակում է մեր մրցունակության մահ:
- Վրաստանի ճանապարհն ապահո՞վ է: Շատ փաստեր վկայում են հակառակը:
- Թուրքերն ավելի հուսալի տնտեսական գործընկեր են, քան վրացիները:
- Երկրորդ սցենարի դեպքում մեր հասարակության բևեռացվածությունը կավելանա ու ամեն ինչ էլ ավելի կթանկանա:
- Առաջին հայացքից բարիդրացիական հարաբերությունները միայն դրական լույսի ներքո են երևում: Այդ հարաբերությունների արդյունքում մեծ ներհոսք է լինելու մահմեդական բնակչության: 89-ին մեծ ջանք գործադրեցինք թուրքերին ու քրդերին այստեղից հեռացնելու համար, հիմա նորից հետ ընդունե՞նք: Հարաբերությունները ավելի լայն համատեքստում պիտի դիտարկել. դա միայն տնտեսական դաշտում չպիտի քննարկել, նաև ազգային ինքնության ու պետականաշինության:
- Մեր տարածաշրջանում Թուրքիայի հետ հարաբերությունները պետք է դիտարկվեն այլ կերպ՝ մի քիչ զիջենք, փոխհամաձայնություն, փոխզիջում:
- Արդյո՞ք մեր իսկ երկրի ներսում առևտրի ու տնտեսության զարգացման համար համապատասխան պայմաններ կան:
- Ես ուզում եմ մենք ինքնաբավ լինենք ու երկրորդ սցենարը դրան կնպաստի: Ստիպված կլինենք մենք մերը զարգացնել:
- Երրորդ սցենաը շատ լավն է, բայց հնարավոր չէ: Շատ դժվար է:
- Վրաստանը շատ լավ գործընկեր է: Վերջին հինգ տարիների ընթացքում հայ գործարարն ավելի պաշտպանված է Վրաստանում, քան Հայաստանում, գոնե առաջիկա հիսուն տարիներին:
- Ինչ սցենար էլ լինի, եթե մեր կառավարությունը շարունակի սխալ քաղաքականություն վարել, կմնանք նույն տաշտակի առջև:
- Թուրքիան մեզ հետ զիջում չի պատրաստվում անել, պահանջների մի ամբողջ շարան է տվել: Մենք էլ չպետք է գնանք զիջման:
- Եթե բոլոր նախապայմանները քննարկվեն ու լուծում ստանան, այդ դեպքում միայն հնարավոր կլինի երրորդ սցենարի իրականացումը:
- Եթե ամբողջ աշխարհում էկոլոգիապես մաքուր սննդամթերքի կարիք կա, ապա Հայաստանը կարող է հանդես գալ արտադրողի դերում: Արտահանումն է խնդիր, բայց դրան ավելի շատ խանգարում է մոնոպոլիան, ոչ թե փակ սահմանը:
- Մենք ամբողջ տարվա կուտակածը տասն օրում Քոբուլեթի ենք տանում, ինչու՞ վրացիները մեզ չեն սիրելու:
- Ես չեմ ուզում, որ թուրքերը հողերը ետ վերադարձնեն. ասենք թե տվեցին, ի՞նչ ենք անելու:
- Եթե Թուրքիայում ամեն օր լրագրողներ են մահանում, ապա ի՞նչ երաշխիքներ կան, որ որևէ իրավական գործիք կաշխատի Թուրքիայի հետ:
- Քանի Հայաստանը վարում է սխալ ֆիսկալ քաղաքականություն, սահմանների բացումը ինքնասպանություն է:
- մենք շատ անմշակ հողեր ունենք, որոնց հարցերը չենք կարողանում լուծել, ավել հողերն ինչ ենք անելու՞:
- 2-րդ սցենարը այն ծայրահեղական սցենարն է, որ կարող է վերջապես ստիպել մեր կառավարությանը լավ աշխատել:
- Հիշենք Բիսմարկի ասածը՝ ճառերով չեն որոշվելու հարցերը:
- Արձանագրությունների շուրջ բանակցությունները վերսկսելու համա՞ր ենք անում էս ամեն ինչը: Ինչո՞ւ նվաստանանք, ինչո՞ւ զիջումների գնանք, որ վաղը գան մորթե՞ն:
- Թուրքիային պետք չէ սահմանի բացումը: Այս ամենը միայն Ամերիկայի համար է անում:
- Եթե մեր հողերը չենք ուզում, ինչո՞ւ ենք ամբողջ աշխարհով գոռում ապրիլի 24-ի մասին:
- Հայաստանը պիտի կարողանա համոզել Թուրքիային, որ բաց սահմանները նշանակում են իր արևելյան մարզերի զարգացում:
- Թող իրենք ճանաչեն ցեղասպանությունը և Ղարաբաղի հարցը փակված համարեն, նոր կմտածենք երրորդ սցենարի իրականացման մասին:

- Ոչ մի երաշխիք, որ բաց սահմաններից հետո Թուրքիան չի արագացնի իր պանթյուրքական քաղաքականության իրականացումը:
- Երկրորդ սցենարը ժամանակավոր բարելավում կբերի, ընդ որում միայն տնտեսության մեջ: Մնացած բնագավառներում կբերի բացասական զարգացումների, օրինակ դեմոգրաֆիական ոլորտում:
- Ես վատ բան չեմ տեսնում սահմանի բացման վերաբերյալ, դա կարող է դրական փոփոխությունների բերել
- Մենք այսօր շրջապատվածն ենք թշնամի երկներով, ձևացնենք, որ խելո՞ք են ու ամեն ինչ հնարավոր է լավ լինի՞բի:
- Երրորդ սցենարով էս խնդիրը դառնում է վրացական խնդրի նման. ոտնատակ ենք լինում ուժեղ տերությունների արանքում:
- Դե իհարկե երրորդը հնարավոր չի
- Երրորդ սցենարը մեզ դուր է գալիս, բայց շանսեր չունենք իրականացնելու:
- Սահմանը պետք է բացել միայն մի դեպքում՝ եթե թուրքերը ընդունեն իրենց մեղքը: Այլապես սահմանի բացումը մեծ վտանգ է ներկայացնում:
- Այսօր մեր հարկային քաղաքականությունն էնպիսի ծանր հարված է հասցնում արտադրողին, որ դրսից ներկելը ոչ թե խնդրի լուծում է առաջարկելու, այլ նոր խնդիրներ: Արտագաղթն արդեն իսկ ահագնացող չափերի է հասել: Ո՞ւմ համար ենք ապրանք ներմուծելու:
- Մենք ոչ մի քայլ չենք կարող անել, առանց Ռուսաստանի հետ համաձայնացնելու, մեր միակ հույսը Ռուսաստանն է:
- Ոչ միայն սահմանի բացում, այլ նաև ներսում պետք է փոխվեն շատ բաներ:
- Մի կողմից սահմանների բացումը լավ կլինի. կբացվեն սահմաններն ու կզարգանա տնտեսությունը: Բայց մյուս կողմից էլ շատ վտանգներ են մեզ սպասվում:
- Երրորդ սցենարը ֆանտաստիկ է ինձ թվում:
- Եկեք մեր տնտեսությունը զարգացնենք, հետո նոր սահմանը բացենք:
- Քրիստոնեություն ընդունեցինք, որ չձուլվենք, սակայն սահմանի բացումը կտանի քրդերի հետ ձուլման:
- Մեր մաքսային ծառայությունը շատ անորակ է: Ամեն ինչ ձևական ու թղթաբանական է:
- Մեր դիվանագետները պետք է երկար մտածեն՝ ճիշտ քաղաքական քայլեր մշակելու ուղղությամբ:
- Մեքենայի մաքսը գերազանցում է մեքենայի գինը, իսկ դա ու՞ր է գնում:
- Ռուսաստանին ձեռնտու է հայ-թուրքական սահմանի բացումը, Հայաստանը Ռուսաստանի հետ միշտ էլ դարպաս է եղել, մենք Ռուսաստանին շատ ենք պետք
- Հենց միայն մեր ներքին մրցակցության զարգացման համար պետք է սահմանը բացել:
- Ասենք թե մեր ներքին բարգավաճությունն ապահովեցինք, բայց մեկուսացած մնացինք: Այսօրվա փոխկապակցված աշխարհում մենք կարո՞ղ ենք այդ «շքեղությունը» մեզ թույլ տալ:
- Սահմանի բացման դեպքում մեր տնտեսությունը կաշխուժանա, բայց չգիտեմ դա կբերի լավին, թե վատին:
- Ցանկացած պետություն եթե շահ չունի, Հայաստանի կողմը չի բռնի, դարերի ապացույց է դա, միշտ էլ մեզ մենակ են թողել
- Մեր կառավարությունը եվրոպական չափանիշները հիշում է ժողովրդից փող հավաքելիս, իսկ մնացած դեպքերում դրանց մասին մոռանում է:
- Որևէ միջազգային հարց լուծելու համար պետք է ներքին հարցերը կարգավորել:
- Հայաստանը երկփեղկվել է, չգիտի ում հետևից է ուզում գնալ:
- Թուրքական ապրանքները, լինելով ավելի էժան, կլցնեն մեր շուկան, ու մենք կկորցնենք շատ-շատ բաներ:
- Փոխզիջումն անհրաժեշտ է. մենք բոլոր հարևանների հետ խնդիր ունենք:
- Առաջին հերթին մեր ֆեոդալական մտածելակերպն է պետք փոխել, հետո նոր սահմանը բացել:
- Թող առանց սահմանի բացման՝ տնտեսությունը զարգանա: Ինչ կապ կա այս երկուսի մեջ:

- Թող սահմանը բացվի, որ Գյումրին դառնա կարևոր երկաթգծային խաչմերուկ:
- Մենք կրիայի քայլեր ենք անում, իսկ Թուրքիան ձիու նման վազում է:
- Եվրոպա, Եվրոպա... Այնտեղ ապրում է բազմամիլիոնանոց թուրքական համայնք: Դա հաշվի առե՞լ ենք Եվրոպայի հետ մերձեցման գործում:
- Որևէ հաջողության հասնելու համար պիտի կարողանանք հստակ սահմանել մեր շահերը: Ո՞րն է մեր շահը Թուրքիայի հետ հարաբերություններ հաստատելու համար:
- Եթե ներմուծման հարկը սահմանների բացելուց հետո էլ երեսուն տոկոս լինի, ապա բացելն իմաստ չունի:
- Եկեք մեր ներքին գենոցիդային մտածելակերպը մի կողմ դնենք /չմոռանանք/ ու առաջին հերթին մտածենք մեր պետության շահերի մասին:
- Այն ապրանքը, որը Հայաստանում չի արտադրվում, Հայաստան պետք է մտնի առանց մաքսի:
- Այսօր Թուրքիայում ապրում է կես միլիոն հայ, բայց ոչ ոք չի ձուլվել: Ինչո՞ւ պիտի վախենանք դեմոգրաֆիական աղետից:
- Օրհնվի էն սհաթը, որ ռսի ոտը....., թեկուզ Ամերիկայի գաղութ, բայց մեր երեխաները թող լավ ապրեն
- Ես համաձայն եմ, որ մենք տնտեսապես զարգանանք, թեկուզ Ղարաբաղը վերադարձնելու հաշվին:
- Այսօրվա հարևաններին մի բան զիջենք, մեզ ամբողջությամբ կուլ կտան:
- Եթե Վրաստանի հետ կապը վերանա, մենք ուրիշ տեղից գազ չենք կարող ստանալ, իրանց հետ պետք չէ վատացնել հաբերությունները, իսկ Թուրքիայի հետ ինչ ճանապարհ էլ լինի, մեզ ձեռք է տալիս
- Ես ուզում եմ լավ ապրել, մարդավարի: Անգամ համաձայն եմ, որ Հայաստանը Թուրքիային տան. ավելի լավ կլինի: Մեկ է մեր երկրում ենք ստրուկի պես ապրում, ինչ տարբերություն:
- Չորրորդ սցենարը շատ հավանական է թվում՝ ռուսներն ու թուրքերը՝ մեր հաշվին...
- Չորրորդ սցենարի իրականացման դեպքում Հայստանը կտուժի միանշանակ: Թուրքիան հզոր է , իսկ մենք թույլ ու անօգնական:
- Ռուսը մեզ համար միշտ էլ լավ է:
- Ռուսը սպիտակ թուրք է:
- Չորրորդ անարդար սցենարը կախված է մեր կառավարությունից:
- Եթե մտադիր լիներ՝ Թուրքիան վաղուց կբացեր սահմանը:
- Համ էլ թուրքական դիվանագիտությունն է շատ ուժեղ. թուրքերին երբեք չի կարելի հավատալ: Երիտթուրքերի քաղաքականությունը մոռցել ե՞ք :
- Չորրորդ սցենարը ամենահավանական տարբերակն է. սելջուկ-թուրքական «խարակտերի» դրսևորում:
- Սա ամենահավանական սցենարն է: Հաշվի առնելով ներքին և արտաքին գործոնները: Հասարակ քաղաքացին ոչինչ էլ չի զգա, բայց որոշ մարդիկ, մեկ-երկու, ահագին կհարստանան:
- Չորրորդ սցենարի դեպքում տնտեսությունը կբարելավվի, բայց բոլոր լծակները նորից կմնան ռուսների ձեռքը:
- Սահմանի բացվելը ձեռնտու է միայն ռուսական կողմին, քանի որ նրա կապիտալը բավականին մեծ է Հայաստանում
- Իմ կարծիքով զուտ տարածքային խնդրի հարց է, ԼՂՀ հարցը լուծելուց հետո, հաջորդ հարցը կանդրադառնա Թուրքիայինը, իսկ սենց «ախպերավարի» լավ էլ իրար օգնում են
- Մեր արտաքին քաղաքականությունն այնքան էլ վատը չէ. սարսափելին ներքին քաղաքականությունն է:
- Ռուսական դիվանագիտությունն է որոշում մեր երկրի տնտեսության հարցերը:
- «Մեր հարցերի լուծումները մեր մեջ են, իսկ մենք Բեռնլինում կփնտրենք», - ասել է Խրիմյան Հայրիկը: Հիմա ռուսները կառավարելու են, մենք՝ աշխատելու:
- Չորրորդ սցենարը ձեռնտու տարբերակ չէ:
- Սա իրականությանը մոտիկ սցենար է, դրա համար էլ վախենում եմ, որ իրականանա:

- Միայն մեր կառավարությունը, թեկուզ «համահայկական կառավարությունը», ի զորու չէ այս հարցը լուծել: Ռուսներն ու ամերիկացիները կասեն շնչեք, կշնչեք, կասեն մի շնչեք՝ չենք շնչի:
- Մենք վստահում ենք ռուսներին, նրանք քրիստոնյա են:
- Սահմանների բացումը լավ է, բայց մենք պատրա՞ստ ենք դրան: Եթե այսօր պարի խմբերով են գաղթում, վաղը բաց սահմաններով հազարավորներով են գաղթելու Թուրքիա ու Եվրոպա:
- Թուրքիայի հետ պետք է բարիդրացիական հարաբերություններ սահմանել
- Թուրքիայի աշխարհաքաղաքան հավակնություններն այլ են, իսկ մենք ոսկոր ենք: Մեզ պահում է մեր ջուրը, բառիս բուն իմաստով՝ խմելու ջուրը:
- Բիզնեսը ոչ մի սահման չի ճանաչում
- Պետք է ունենանք ամուր կամք, հոգեբանություն, ժողովրդավարություն և այս ամենը լավ կլուծվի:
- Ժողովուրդը համատարած արտագաղթում է: Ո՞վ է կասեցնում այդ գործընթացը: Դուք բաց ու փակ սահմաններից եք խոսում...
- Ցանկացած հարցի պատասխան կարող է տալ հայ գործարար աշխարհը, եթե նրանք գործեն ոչ թե իշահ իրենց գրպանի, այլ իշահ ազգի:
- ԸՍՏ ՉՈՐՐՈՐԴ ՍՑԵՆԱՐԻ, ՄԵՆՔ ՄԵՐ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՈԼՈՐ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐԸ ՁԻՋՈՒՄ ԵՆՔ, ԼՐԻՎ:
- Հայաստանի համար օրինակ պետք է հանդիսանա Ճապոնիան, վերցրեց եվրոպական հոգի և ճապոնական աշխատասիրություն: Միասնական գաղափարի հետևից են գնում:
- Հայաստանում ինչքան մարդահամար կեղնի, վեչնի էրկու միլիոն մարդ է:
- Մենք հայերս դեռ տրամադրված չենք էս բոլոր հարցերը լուծելու: Երբ որ տրամադրվենք, էն ժամանակ էլ եկեք խոսենք այս ամենի մասին: Այսօչ դեռ թուրք ասելուց համապատասխան զգացումներ ենք ունենում:
- «Մարդն իրեն կերակրող ձեռքը չի կտրի», եթե Թուրքիան տեսնի, որ բաց սահմաններն իրեն ձեռք են տալիս, լաաաավ էլ կբացի
- Մենք վաճառեցինք ամեն ինչ, ու կորցրեցինք մեր երկիրը. «Պարտքի դիմաց փող ենք տալիս, առանց գիտակցելու դրանց արժեքը»:
- ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՅԱԹԱՓՎՈՒՄ Է. ՍԱ ՀԻՄԱ ԱՎԵԼԻ ԿԱՐԵՎՈՐ ԽՆԴԻՐԷ. ԻՆՉ ԵՆՔ ԱՆՈՒՄ ՆՈՐ ՀՈՂԵՐԸ:
- Մենք պետք է վերականգնենք մեր ստրատեգիական հզորությունները, որ ունենանք պետություն կոչվելու իրավունք:
- Սահմանի բանալը մեզ օգուտ է, համեմատենք Չինաստանի հետ, ով կառուցեց հսկա պարիսպը և իր ունենցածը մնաց միայն իրեն:
- Եկեք սահմանը բացենք ու տնտեսություն զարգացնենք, հզորանանք ու նոր արդեն մնացած հարցերի մասին մտածենք:
- Ստրատեգիական նշանակության օբյեկտները չի կարելի վաճառե՛լ, և վե՛րջ:

Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման խնդիրները

Համաքաղաքային քննարկումներ Իջևանում

24.12.2010

Քննարկման ընթացքում արձանագրված մտքերը

- ԲԱՐԻ ՕՐ ԻՋԵՎԱՆ
- Ողջունում ենք համաքաղաքային քննարկման մասնակիցներին
- Իհարկե, մի կողմից սահմանի բացումը շատ կարևոր է, բայց մենք դեռ շատ խնդիրներ ունենք լուծելու:
- Որպես քաղաքակիրթ ազգ, մենք պետք է սահմանը բացենք, բայց երկրի անվտանգության հարցը պետք է լուծել:
- Որպեսզի Թուրքիայի ձեռքը նոր լծակներ չտանք, ի սկզբանե պետք չէր արձանագրությունները ստորագրել:
- Սահնամերձ գոտում եմ ապրում, երևանցու նման չեմ մտածում. սահմանը բացելը ես ճիշտ չեմ համարում:
- Առաջին հերթին պետք է նշել , որ Թուրքիան քաղաքակիրթ պետություն չէ, դրա համար էլ հարաբերությունները նրանց հետ դժվար են ընթանալու:
- Ես Թուրքերից շատ եմ վախենում, չեմ վստահում:
- Սահմանի բացումն օգտակար է լինելու միայն օլիգարխներին: Իրանի հետ էլ լավացրեցինք հարաբերությունները, գազ քաշեցինք, բայց էսօր գազն էլի թանկացել ա...
- Այս գործենթացից ժողովուրդը չի շահելու՝ օլիգարխներն ու իշխանությունը կշահեն միայն: Միակ դրական պահը երևի այն կլինի, որ Վրաստանից այդքան կախված չենք լինի:
- Մենք իհարկե գնում ենք ու հանգստանում այնտեղ, առևտուր ենք անում,բայց, միևնույնն է , վախը միշտ կա:
- Ես կարծում եմ, որ մեր անվտանգության հարցը շատ կսրվի:
- Սահմանի բացումը միայն որոշակի խավի շահերի բավարարմանհամար է: Մեր ազգի համար այն ոչ մի դրական փոփոխություն չի բելերու:
- Ասում են շան հետ ընկերություն արա, բայց փայտը ձեռքիցդ մի գցի, բայց դե մենք փայտ էլ չունենք: Եթե անգամ ունենք՝ շատ փոքր է:
- Ուրիշ ոչ մեկին ՝ ոչ Ռուսաստանին, ոչ մի այլ պետության վստահել չի կարելի:
- Թուրքիան որպես պետություն երբեք լուրջ չի վերաբերվել Հայաստանին: Մենք պատրաստ ենք փոխզիջման, մինչդեռ Թուրքիան զբաղվում է միայն քարոզչությամբ:
- Սահմանի բացումը մեզ շատ օգտակար կլինի, բայց դե վաղը կա:
- Իմ կարծիքով, Թուրքիայի սահմանը բացվելուց հետո ժողովուրդը ավելի շատ կկարողանա օգտվել, քան հիմա, թեկուզ օգուտը հիմնականում խոշոր բիզնեսմեններինն է լինելու:
- Տեղացի արտադրողների մասին եկեք մտածենք. մերը գնենք, մերը հագնենք, մերն ուտենք...
- Բայց մենք էլ մենակ ի վիճակի չենք ապրելու, ամեն կողմից փակուղի է:
- Ամեն դեպքում, մենք պետք է մի քիչ մտածենք, թե ինչ ուղի գտնենք, որովհետև շփումը հարևանների հետ կարևոր է:
- Այսօր մեծ թվով անհատ ձեռներեցներ գնում Թուրքիայից ապրանք են առնում ու բերում այստեղ վաճառում են: Բնականաբար սահմանը բացվելուց հետո, անկախ օլիգարխներից, այդ ձեռներեցներն էլ կօգտվեն, այդ ձեռներեցներից ապրանք գնողներն էլ:
- Առևտուրն, անկախ պետական քաղաքականությունից, պիտի տեղի ունենա: Մեր խնդիրն է դրանից քաղված օգուտները պարզել և ուղղել քաղաքական դաշտ:

- Սահմանը բացենք, Թուրքիան, որ զարգացած տնտեսություն ունի, հայկական շուկան ողողելու է էկոլոգիապես ոչ մաքուր ապրանքներով:
- Տնտեսության զարգացման առումով սահմանների բացումը շատ կարևոր է:
- Սահմանների բացումը ճիշտ է, եթե նախապայմաններ չլինեն:
- Կարծում են ներկա վիճակը պահելն ամենաճիշտ տարբերակն է:
- Տավուշի տարածաշրջանի հողերի յոթանասուն տոկոսն անմշակ է: Մենք կարող ենք մեր գյուղատնտեսությունը զարգացնել, փոխանակ մտածենք թուրքական ապրանքների ներմուծման մասին:
- Պետք չէ շատ խորանալ մեր օգուտներ ու վնասների մեջ, այլապես ոչ մի հարաբերություն չենք ունենա ոչ մի հարևանի հետ:
- Նայած, թե ի՞նչ ենք հասկանում սահմանի բացում ասելով. կարող է պատահի թուրքերը գան ու կամաց կամաց էստեղ հաստատվեն:
- Սահմանի բացումից ես վատ ակնկալիք ունեմ մշակութային առումով:
- Կապեր ստղծել պետք է, բայց դրանց հնարավորություններ չպետք է տալ:
- Առանց սահմանները բացելու էլ շատ դժվար կլինի տնտեսապես հզորանալ: Չէ՞ որ հիմա էլ մենք Թուրքիայի հետ առևտրական կապերի մեջ ենք:
- Սահմանի բացման արդյունքում պետությունը պիտի կարողանա այնպիսի սահմանափակումներ մտցնել, որոնք կերաշխավորեն Հայաստանի արտադրության զարգացումը:
- Սահմանի բացումից հետո սոցիալական վիճակից ելնելով շատ հայ աղջիկներ կամուսնանան թուրքերի հետ:
- Ես անգամ չեմ էլ ցանկանում խոսել թուրքերի հետ շփման մասին: Ես դրանց ատում եմ:
- Բաց սահմանն անհրաժեշտ է, բայց սահմանի բացումը պիտի միանշանակորեն կանոնակարգված լինի :
- Այսօրվա երիտասարդները մեծամասամբ գործում են "որտեղ հաց, այնտեղ կաց" սկզբունքով, այնպես որ թուրքերի հետ ամուսնանալու վտանգը կա:
- Մեր վիճակը շատ ավելի լուրջ է, քան կարծում ենք:
- Միջազգային առևտրային կազմակերպությունները երաշխիք չեն, որովհետև նույնիսկ հիմա Թուրքիան խախտում է իր ստանձնած պարտավորությունները, երբ կա հակասություն դրանց և իր շահերի միջև:
- Մեր ասածն ու իրավիճակը չեն համապատասխանում իրար: Իսկ քաղաքական գործիչները իրենց հաշիվներն ունեն:
- Սահմանի բացումը մի ուրիշ վտանգ էլ է պարունակում՝ թուրքերը կամաց-կամաց կլցվեն այստեղ ու այս մի փոքր Հայաստանն էլ վերջապես կգրավեն: Հազիվ մաքրեցինք Հայաստանը դրանցից:
- Սահմանի բացումը ոչինչ չի տա հասարակ ժողովրդին. դա միայն հարուստներին ու բիզնեսմեններին օգուտ կբերի:
- Սահմանի բացումը կբերի նրան, որ ավելի կհեշտանա Ցեղասպանության ճանաչման գործընթացը:
- Թուրքիան արդեն էնքան հզոր է, որ անգամ Ամերիկան կվախենա նրա վրա ճնշում գործադրել
- Երկրորդ սցենարը ինձ դուր է գալիս, բայց պետքէ քաղաքակիրթ կետ գտնել ու ուղղակի համագործակցել:
- Թուրքերի հետ լիարժեք հարաբերություններ հաստատել հնարարոր չէ, ոչ էլ ճիշտ է թշնամանքն անվերջ խորացնելը: Միջին տարբերակ է հարկավոր գտնել:
- Ես կոշտ քաղաքականությանը դեմ եմ. մենք քիչ ենք ու թույլ:
- Արձանագրություններն ընդհանրապես պիտի չստորագրվեին...
- Պատմությունը մեզ սովորեցնում է, որ թուրքերի հետ ընդհանրապես չշփվենք, բայց էլի ասում ենք հայ-թուրքական հարաբերություններ... Չնայած մեր հարևաններն են՝ չենք կարող չշփվել, բայց եկեք սահմանը այնուամենայնիվ չբացենք՝ այսպես ավելի լավ է:
- Ստորագրությունը պիտի չեղյալ համարել, որովհետև ոտնահարվել է հայ ազգի արժանապատվությունը:
- Մեզ վրա ոչ ոք ուշադրություն չի դարձնի. մենք մի փոքր ու թույլ պետություն ենք:

- Մենք սահմանը չենք փակել... Այդուհանդերձ որոշակի զիջումների գնացինք: Արդեն նույնիսկ չենք խոսում Ցեղասպանության մասին: Էլ ի՞նչ անենք: Այսքան ստորանալուց հետո, դեռ պիտի ինչ-որ նո՞ր զիջումների մասին էլ խոսենք:
- Մենք թուրքերի հետ ոնց եղել ենք, տենց էլ մնում ենք: Փորձեցինք առաջ գնալ, բայց չի ստացվում:
- Անպայման պետք է փորձել նրանց հետ նորմալ հարաբերություններ սկսել. սահմանների բացումը ցանկացած պետության համար կարևոր է:
- Թուրքիան էլ ինքնագլուխ չի. անպայման կգա մի ժամանակ, երբ Թուրքիան ստիպված կլինի ընդունել շատ բաներ:
- Հաջորդ սերունդների համար, չեմ կարող ասել, մեր կայացրած որոշումը ճիշտ կլինի, թե սխալ, բայց պետք էլ չէ չսխալվելու համար խուսափել որոշում կայացնելուց:
- Սփյուռքը իրավունք չունի հայրենիքին մեղադրել: Առանց հգայրենիքի սփյուռքը գոյություն չի ունենա:
- Միջազգային դիվանագիտական խաղի կանոնները թելադրում են շարունակել ստոագրության դրական դինամիկան: Հայաստանը պիտի կարողանա ստիպել Թուրքիային, որպեսզի վերջինս ինքը հրաժարվի այս արձանագրություններից: Ստորագրությունից հրաժարվելը զգացմունքային քայլ կլինի:
- Շատ բաներ կան, որ հասարակ ժողովուրդը չգիտի. պետք է ինֆորմացիային տիրապետել, որ ասել ճիշտ է, թե՞ սխալ:
- Մեր դիվանագիտությունն ամեն դեպքում թույլ է:
- Բայց մենք մեր ունեցածը երբեմն շատ ենք թերագնահատում:
- Բոլոր մեթոդները կարելի է կիրառել, եթե համընկնում են մեր շահերին՝ կլինի դա փոքր քայլերով, թե մեծ գործողություններով:
- Ամեն ինչ պետք էփորձել՝ նպատակին հասնելու համար: Փոքր քայլերով առաջ գնալն ավելի հաստատուն ու կայուն կլինի:
- Պարտադիր չի հարևանիդ հետ շփվես, բայց հնարավոր է ջուր լցնես նրա գլխին, չէ՞...
- Պետք է նրանց մի անկյուն գցել ու ստիպել, որ նա ձեռքերը վեր բարձրացնի:
- Ստորագրության չեղյալ համարելը նշանակում է նոր բանակցությունների հնարավորության դեպքում սկսել զրոյից: Սա թուլացնում է Հայաստանի դիրքերը:
- Ես կարծում եմ, որ Ամերիկան չի ցանկանա, որ Հայսատանն ու Թուքրիան սկսեն բանակցել, դա ավելի շատ բխում է Ռուսաստանի շահերից:
- Շատ բան է իրար հետ շաղկապված այս գործընթացում, շատ բարդ պրոցես է ու դժվար է ասել, թե ինչի դեպքում ինչ կլինի:
- Կարծում եմ ճիշտ կլինի , որ բանակցությունների մասին տեղյակ լինի նաև ժողովուրդը: Ինչո՞ւ գաղտնի պահել:
- Ժողովուրդը բավականին բարձր մակարդակ ունի, լավն ու վատը շատ ճիշտ են գնահատում:
- Երրորդ սցենարներում դրված հարցադրումներն, իմ կարծիքով, շատ խորացված են հասարակ քաղաքացու համար՝ դժվար է այս սցենարների միջոցով հասարակ քաղաքացիների կարծիքն իմանալ:
- Այս սցենարներում դրված հարցադրումները, իմ կարծիքով, շատ խորացված են հասարակ քաղաքացու համար՝ դժվար է այս սցենարների միջոցով հասարակ քաղաքացիների կարծիքը իմանալ:
- Ցանկացած պարագայում սահմանի բացումը կարևոր է. հիշու՞մ եք ինչ եղավ, որբ վրացական սահմանը փակվեց: Մենք մնացինք փակուղու մեջ:
- Մեր տարածաշրջանում ցանկացած պատերազմ մեզ վնաս է, բայց թուրքերի հետ ինչ էլ ստորագրենք միևնույնն է օգուտ չի տա: Թուքրը էն ազգը չի, որի հետ կարելի է պայմանագրերով հարց լուծել:
- Բանակցության ժամանակ ձեր հարևանի ձեռքին գտնվում է մի արժեք, որը ձեզ համար էական է և նա շահարկում է այն: Դուք ի՞նչ կանեք. պիտի ամեն կերպ փորձեք վերցնել այն: Թուրքիան հիմա նման կերպ է վարվում Ցեղասպանության հարցում:
- Չորրորդ սցենարը մի քիչ անհավանակ է թվում, մենք ինչ ռեսուրսներ ունենք:
- Մենք պարտավոր ենք պահել մեր հարաբերությունները հարևանների հետ:

- Հայաստանն այդքան ուժ ու հնարավորություն չունի, որ Հյուսիս-Հարավ ուղղության վրա այդքան ծախս անի ու զարգացնի:
- Ես չեմ կարծում, որ Վրաստանի հետ հարաբերությունները հնարավոր չի ավելի ջերմացնել. վրացիները նացիոնալիստ են:
- Իսկ միգուցե ավելի ճիշտ կլինի իրանի հետ հարաբերությունները լավացնե՞լ.. չգիտեմ:
- Անգամ միջնորդ պետությունները, որոնք գործընթացի սկզբում ակտիվորեն խրախուսում էին արձանագրությունների վավերացումը, Թուրքիայի անընդունելի պահվածքին ոչ մի կերպ չարձագանքեցին:
- Վրաստանը չի էլ ուզում, որ մենք Թուրքիայի հետ հարաբերությունները լավացնենք. դա նրա շահերից չի բխում:
- Սահմանի բացումը կարևոր է, դա երկիր տնտեսության համար միանշանակ օգտակար կլինի:
- Ավելի լավ է քչով բավարարվենք ու մեր հարաբերությունները զարգացնենք Վրաստանի ու Իրանի հետ:
- Ոնց էլ պտտվում ենք, Թուրքիայի սահամնի բացումը մեզ պետք է. Վրաստանի մոնոպոլիան էլ կվերանա:
- Թուքիան կայուն դիվանագիտություն չունի: Պատմականորեն այն վարել է կարճատես քաղաքականություն: Այդ իսկ պատճառով հարաբերությունների զարգացման ցանկացած սցենար հավանական է:
- Հնարավոր է, որ երկու ազգերը իրար հե շփվելուց հետո իրար ավելի լավ ճանաչեն ու հարցերն ավելի հեշտ լուծվեն:
- Մենք կարող ենք բոլորի հետ լեզու գտնել, բացի թուրքերից: Նրանք տնտեսականից առաջ քաղաքական հարցեր են առաջ քաշում, որն էլ ետ է պահում մեզ իրենց հետ շփումից:
- Թուրքից մեծահոգի քայլ սպասելն անհնար է. դա բացառում եմ:
- Ցանկանում ենք, որ բոլոր կողմերից հանգիստ լինի, խաղաղ լինի, բայց սա հասարակ ժողովրդի մակարդակի հարց չէ:
- Թուրքիան անկանխատեսելի գործընկեր է: Մենք պիտի կարողանանք մեր գործողությունները տեղափոխենք Թուքիայի տարածք: Մենք պիտի աշխատենք Թուրքիայի մեկուկես միլիոն էթնիկ հայերի, քրդերի, ալևիների և նմանատիպ այլ ներքին խնդիրներից մեր շահերի բավարարման համար ճանապարհներ փնտրել:
- Ցավալի է, բայց ոչ մի նորմալ ու կայուն հարևան չունենք:
- Միակ հույսը մենք ենք. Հայաստանը պետք է ծաղկեցնել ու առաջ քաշել խնդիրները: